

# ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Ստորեւ կը ներկայացնենք Ուրբաթ, 11 Յուլիս 2008-ի առաւօտեան լոյս տեսած լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրները:

## ՆԱԿԱՐ



Խորհրդարանական մեծամասնութիւնը կ'ամրապնդէ փոխ հասկացողութեան իր քայլերը:

Պըրրի խորհրդարանական մեծամասնութեան կողմէ արդարադատութեան աթոռէն հրաժարելուն հետ կը պայմանաւորէ Զանտայէն հրաժարումը:

Եռեակի հանդիպում մը Փարիզի մէջ:

Տեղեկատուութիւններ՝ կառավարութեան կազմը այսօր յայտարարելու մասին:

Սորաթինսու կը փորձէ Զազաֆիին համոզել մասնակցելու՝ համա-միջերկրականեան երկիրներու խորհրդաժողովին:

## ԱՆՈՒԲԱՐ



Խորհրդարանը Նիստի մը հրաւիրելու Պըրրիի զգուշացումը կը հանդիպի խորհրդարանական մեծամասնութեան քննադատութիւններուն:

Զանտայի նախարարութեան շուրջ ծագած վեճը անորոշութեան կը մատնէ նոր կառավարութեան ճակատագիրը:

Լիբանանեան բանակին կողմէ ուժի գործածութեան սպառնալիքէն ետք Թրիփոլիի մէջ կը տիրէ աստիճանական հանդարտութիւն մը:

## ՄՈՒՍԹԱԲՊԱԼ



Պըրրի կը պաշտպանէ Զանտայի թեկնածութիւնը եւ կ'արտայայտէ խորհրդարանը Նիստի հրաւիրելու իր տրամադրութիւնը:

Ընդդիմութեան կողմէ ծագած խոչընդոտները ծախողութեան կը մատնեն նախագահ Սըլէյմանի Փարիզ մեկնումէն առաջ կառավարութեան կազմը յայտարարելու ճիգերը:

Սաատ Զարիբի կ'ամրապնդէ Մարտ 14-ի ուժերուն միջեւ համախոհութիւնը:

Զըրնէթ Շահուանի անդամները վարչապետ Սիսիորային կը լիազօրեն կատարելու նախարարներու անուններուն միջեւ ընտրանքը:

Փարիզ կը դատապարտէ բնակութեան նոր վայրեր կառուցելու Իսրայէլի քայլերը:

## ՍԱՖԻՐ



Ճումպլաթ կը հրաժարի Թամմէն, Զարիբի՝ Խուրիէն. բանակցութիւնները դարձեալ կը վերսկսին:

Զաթար, Սեւուական Արաբիա եւ Ֆրանսա կ'աշխատին դիրացնել կառավարութեան կազմութեան աշխատանքները:

## ՊԱՅՐԱԲ



Կառավարութեան հարցը պիտի վճռուի այսօր, այլապէս՝ Պըրրի որոշած է խորհրդարանը Նիստի մը հրաւիրել, քննարկելու կառավարութեան թղթածրարը:

Նախագահ Սըլէյման իրեն հետ հեռաձայնային խօսակցութիւններ ունեցողներուն եւ վարչապետ Սիսիորային փոխանցած է, թէ կառավարութեան կազմը կը պահանջէ յայտարարել նախքան իր Փարիզ կատարելիք ճամբորդութիւնը:

Խոճա այցելեց վարչապետարան եւ Զըրայթէմ:

## ԼԻՈՒԲԱ



Սաատ Զարիբի հանդիպումներ կ'ունենայ ճեմայէլի եւ Ճումպլաթի հետ: Կեցուածքները մեղմացնելու ուղղութեամբ միջնորդութեան գիծին մէջ կը մտնէ Սեւուական Արաբիոյ դեսպանը:

Կարգ մը տեղեկութիւններու համաձայն՝ կառավարութեան կազմը պիտի յայտարարուի այսօր:

Բանակը իր հակակշիռին տակ կ'առնէ Թրիփոլիի ապահովութեան հսկողութիւնը:

Զանտայէն հրաժարելու իբրեւ նախապայման՝ Լիբանանեան Ուժերն կը պահանջուի հրաժարիլ արդարադատութեան պաշտօնէն:

## ՏԻԱՐ



Պըրրի կը հակադարձէ խորհրդարանը հրաւիրելով Նիստի: Կառավարական տագնապը շարունակուելու պարագային Պըրրի պիտի առաջարկէ չեզոք կառավարութեան մը կազմութիւնը:

## ՀԱՅԱԹ



Թուրքիոյ վարչապետ Էրտողան կը ստանայ Իրաքի գօրակցութիւնը: Էրտողան եւ Մեյիքի կը կնքեն ռազմավարական համագործակցութեան համաձայնագիր մը:

Թրիփոլիի մէջ կը տիրէ հանդարտութիւն: Խորհրդարանական մեծամասնութիւնը կը բազմապատկէ ազգային համախոհութիւն ստեղծելու իր ճիգերը:

Կառավարութեան կազմը ուշանալու պարագային՝ Պըրրի կը սպառնայ Նիստի հրաւիրել խորհրդարանը:

## ՇԱՐԲ



Սաատ Զարիբի այցելեց ճեմայէլին եւ Ճումպլաթին, իսկ վարչապետը ընդունեց Զըրնէթ Շահուանը:

Ընդդիմութիւնը կառուցած կը մնայ Զանտայի թեկնածութեան:

Պըրրիի կարծիքով, կառավարութեան տագնապը պիտի երկարի:

## ՊԱՆԱՏ



Կառավարութեան կազմութեան թղթածրարը փոխադրուեցաւ Փարիզ:



### Հայրենական Ֆութպոլ

## ՓԻՆԻԿ-ԱՐԱՐԱՏ 1-0 ՍԻԶԱ-ԲԱՆԱՆՏ 1-3

Հինգշաբթի օր տեղի ունեցան Հայաստանի 2008 տարուան ֆութպոլի ախոյեանութեան 15-րդ հանգրուանի հանդիպումները, որոնց հետ մրցաշարը իր «հասարակած»-ը անցնելով թեակոյնից երկրորդ կէտը:

Այս հանգրուանը գագաթի հանդիպումներու հանգրուանն էր: Առաջատար Արարատը հիւրընկալուեցաւ Փինիկի կողմէ եւ պարտութիւն կրեց 1-0 արդիւնքով (կողմ նշանակեց Գարաբաղ-ցեանը, 60-րդ վայրկեանին): Նշենք, թէ Արարատի այս պարտութիւնը երրորդն է վերջին եօթ մրցումներուն: Իսկ Սիքա-Բանանց հանդիպումը արարտեցաւ 3-1 արդիւնքով, ի նպաստ այցելու խումբին: Փինիկի գրաւեց 2-րդ դիրքը, իսկ Սիքա Նահանջն՝ 4-րդ դիրքը: Գանձասար 4-1 մեծ արդիւնքով պարտութեան մատնեց Ուլիսը, վերջին հինգ մրցումներուն արձանագրելով իր 4-րդ յաղթանակը: Շիրակ, Կիլիկիայի հիւրը ըլլալով, կրեց 2-1 արդիւնքով պարտութիւն մը՝ իր կատարած վերջին 9 մրցումներուն եօթերորդը: Այս հանգրուանին նշանակուեցան մրցանիշային թիւերը՝ 13 կողմէ:

Ընդհանուր դասաւորման աղիւսակը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

Արարատ՝ 29 կէտ, Փինիկի, Բանանց եւ Սիքա՝ 24-ական կէտ, Գանձասար՝ 21 կէտ, Ուլիս՝ 13 կէտ, Շիրակ՝ 11 կէտ, Կիլիկիա՝ 7 կէտ:

### ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Յունաստանի Ողիմպիական կոմիտէն յայտարարեց, թէ Փեթրիկ Ողիմպիական խաղերուն պիտի մասնակցի 147 մարզիկներով:

Իսկ Ռուսիոյ Ողիմպիական կոմիտէն յայտարարեց, թէ մետալի տիրացող մարզիկները պիտի ստանան նիւթական պարգևներ:

Ֆութպոլի մէջ, ՖԻՖԱ-ի նախագահ՝ Սեփ Փլաթըր՝ կոչ ուղղեց Մանչեսթըր Եունայթըտին, որպէսզի անոր փորձուցալացի աստղը՝ Զրիսթիանո Ռոնալտո միանայ Ռեալ Մատրիտին. «Ռոնալտո ապագայ չունի Մանչեսթըր Եունայթըտի հետ», ըսաւ Փլաթըրը:

Իտալական Ա. ՍԷ. Միլան խումբը կը փորձէ իր կազմին միացնել Արսենալի յառաջապահ Էմանուէլ Ատեպայորը:

Ֆրանսայի հեծելաբան շրջավազին 6-րդ հանգրուանը արարտեցաւ իտալացի՝ Ռիքարտո Ռիքոյի յաղթանակով: Ընդհանուր դասաւորումը կը գլխաւորէ՝ Զիմ Զըրընը:

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆԸ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲՈՆԸ**

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Հանդէսի ԻԸ. հատորին լոյս ընծայման առիթով հաճոյքն ունին Ձեզ հրաւիրելու հանդիպում-հիւրասիրութեան մը:

Զորեքշաբթի, 16 Յուլիս 2008-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահ, Մեքսիք փողոց, Զանթարի:

**ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՁ**

- 11-18 Յուլիս դէպի Հայաստան շրջապտոյտի ցանկը գոցուած է: Մնացած են շատ քիչ թիւով տեղեր 11-18 Օգոստոս, 1-8 Սեպտեմբեր եւ 22-28 Սեպտեմբեր Միւշուսթրիներէ շրջապտոյտներէն, ամեն մօր տարբեր պտոյտներ, նախաճաշ եւ ընթրիք, պարահանդէս, յիշատակի նուէրներ, զովացուած օթոքար A/C, 3 աստղանի Ա. կարգի պանդոկ \$890, իսկ 5 աստղանի Armenia Royal Palace շքեղ պանդոկ \$990: Սօս օրէն Թեհրան, Նոր Զուղայի յայտագիր:
- 30 Յուլիսէն 3 Օգոստոս Յորդանան, օթոքարով այցելութիւններ Փեթրա, Ճարաշ, Մատայա, Յորդանան գետ, 3 աստղանի պանդոկ, նախաճաշ եւ ընթրիքով, վիզայի տուրք միայն \$315:
- Ամեն շաբաթ **ՎԱՌՆԱ** 8 օր 277 եւրօ:
- Ամեն շաբաթ 4 օր **ԿԻՊՐՈՍ** միայն \$245: Օդանակի տոմսեր յարմար գիներով:

Կարիքը ունինք սկսնակ եւ փորձառութիւն ունեցող օր-իրոյ-պարոններու ticketing-ի վրայ:

**Հայկական Յեղասպանութիւնը Թորոնթոյի Դպրոցներուն Մէջ Դասաւանդելու Որոշումը Կը Վերահաստատուի**

Թորոնթոյի պետական վարժարաններու Վերահսկիչ մարմնի Ծրագիրներու եւ դպրոցական սպասարկութեան յանձնախումբը արտակարգ նիստի մը ընթացքին հաստատած է Թորոնթոյի վարժարաններուն մէջ Հայկական Յեղասպանութեան դասանիւթը 11-րդ կարգի աշակերտներուն դասաւանդելու որոշումը, հակառակ այս առաջարկին դէմ Թորոնթոյ կառավարութեան եւ բրքական կազմակերպութեանց տարած հակաքարոզչութեան:

Հայկական Յեղասպանութեան դասանիւթը պիտի դասաւանդուի մարդկութեան դէմ գործուած ոճիրներու դասաւանդութեանց շրջագիծին մէջ, Ռուստայի եւ հրեաներու ցեղասպանութեանց կողքին:

Գանատայի բրքական կազմակերպութիւնները վեց ամիսէ ի վեր կը պայքարէին այս ծրագրին դէմ եւ հազարաւոր ստորագրութիւններ հաւաքած. նամակներ դրկած էին. որպէսզի արգելք հանդիսանային որոշումին գործադրութեան:

**Մ Ա Ն Ա Զ Դ**

Տիկ. Ժորժէ Թիւթունեան Տեր եւ տիկ. Կիրակոս Թիւթունեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Արա եւ Զուրիկ Սկրտիչեան եւ զաւակունք Տար Պօղոս Թիւթունեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Ստեփան Թիւթունեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Ժիրայր եւ Մարի Թոսունեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Ժիրայր Թիւթունեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Կարպիս Էյերմեզեան եւ զաւակունք Տեր եւ տիկ. Ստեփան Էյերմեզեան եւ զաւակունք եւ համայն՝ Թիւթունեան, Զեշիշեան, Սկրտիչեան, Ժըրժի, Թոսունեան, Էյերմեզեան, Մուղալեան, Ալեքսանեան ընտանիքներ կը գումն իրենց ամուսնոյն, հօր, աներհօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

**ԱԼՊԵՐ ԿԻՐԱԿՈՍ ԹԻԹԻՆՃԵԱՆԻ**  
(Շնեալ՝ 1933-ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 5 Յուլիս 2008-ի երեկոյեան, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 6 Յուլիս 2008 կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Ռըմէլի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Յամուտի Ազգային գերեզմանատուը:

Յաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցոյ սրահը թաղումէն ետք, իսկ Երկուշաբթի 7 եւ Երեքշաբթի 8 Յուլիսին նոյն վայրին մէջ առաւօտեան ժամը 11:00-էն երեկոյեան ժամը 7:00:

**ՅԱԼՎԿՅՈՒԹԻՒՆ**

Ալպեր Թիւթունեանի մահուան առիթով, Աստուծան ընտանիք իրենց խորագգած ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, եւ առ այդ Հ.Մ.Մ.-ի Սկաւուտական Խորհուրդին կը նուիրեն 30 հազար լիբ. սկիլ:

**ԱՊՎԹԻՆՈՒՄԻ ՄԱՂԹԱՆՔ**

Ս.Գ.Հ.Կ. «Ռուբէն Խանազատ» մասնաճիւղը եւ Ճիւնիի Հ.Մ.Մ.-ի վարչութիւնը շուտափոյոջ եւ ամբողջական ապաքինում կը մաղթեն ընկեր Յարութիւն Գեորգեանին, որ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելով, ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջան մը:

**AFIL**  
ARMENIAN FUND FOR INSURANCE  
IN LEBANON

**99 USD ONLY**  
Car Insurance Package

**Save your MONEY & Other's Life**

ARIN CENTER, 4TH FLOOR, TEL, 01 - 242556/7  
E-MAIL: info@afhil.com, www.afhil.com

**ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍ**

**ԼՈՆՏՈՆ** **ԼՈՆՏՈՆ**

ՄԱՆՈՒԿ ԳՈՉԱՃԵԱՆԻ (մահացած՝ Լոնտոն) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Յուլիս 2008-ին, Լոնտոնի Ս. Արագիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Յաւակցութեան համար կարելի է կապ հաստատել հեռ. (44) 2089510584 կամ E-mail: 130258@ukonline.co.uk

**ARARAD DAILY NEWSPAPER**  
Tel. - Fax: 01-56 55 99  
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON  
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

جريدة يومية سياسية أرمنية  
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)  
المدير المسؤول: ابيموغوم كريشيكيان